# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## 09 ՓԵՏՐՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով 05 դեկտեմբերի 2025թ. կազմակերպված «ՎՀ-ԹԻՎ28-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԱՐՏԻՆ ԵՎ ԿՈ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Մասնակից)։ Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՎՀ-ԹԻՎ28-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 16.01.2026թ. «Մարտին և Կո» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծ, որի հաստատման և ներկայացման համար օրենքով սահմանված վերջնաժամանակը եղել է 2026թ. հունվարի 23-ը։

«Մարտին և Կո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 2026թ. հունվարի 23-ին Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին է ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը, որի տեխնիկական բնութագրերում կատարված են եղել արհեստական փոփոխություններ, մասնավորապես՝ Պայմանագրի նախագծով, որը սահմանված է եղել նաև իրավերի տեխնիկական բնութագրով և Մասնակցի կողմից հաստատված Հավելված 1.1-ով 37-րդ չափաբաժնի համար՝ «Նոր Զելանդական կամ համարժեք Անքոր» բառերը փոխարինվել են «Նոր Զելանդական, Անքոր կամ համարժեք» բառերով։ Նմանատիպ փոփոխություններ կատարվել են նաև պայմանագրի այլ չափաբաժիններում, ուստի մասնակցին առաջարկվել է մինչև սահմանված ժամկետի վերջնաժամկետը պայմանագիրը հաստատել ներկայացված տարբերակով, կամ պայմանագրի նախագծով սահմանված այն չափաբաժինների մասով, որոնցում մասնակցի կողմից փոփոխություններ չեն կատարվել ներկայացնել առանձին պայմանագիր և ներկայացնել պատվիրատուին, որպեսզի պատվիրատուն հնարավորություն ունենա այդ չափաբաժինների մասով կնքի պայմանագիր, հակառակ դեպքում պայմանագիրը ամբողջությամբ չի կնքվելու պատվիրատուի կողմից, ինչն էլ համարվելու է, որպես ընտրված մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում։ սակայն «Մարտին և Կո» ՍՊԸ-ն սահմաված ժամկետում չի ներկայացրել պահանջվող պայմանագիրը

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի բ պարբերությամբ՝ (որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց) և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը **որոշում եմ** ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքներ ի առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՎՀ-ԹԻՎ28-ԳՀԱՊՁԲ-01/26-1 | 1.3.8.12.13.22.29.37.70.72.77.79.90.103.105.106.108 | 1-Աղ 3-Արիշտա 8-Բրինձ 2 կլոր 12-Բուսական յուղ /ձեթ/ 13-Բուսական յուղ /ձիթապտղի/ 22-Եգիպտացորենի պահածո 29-Լոբի հատիկավոր 37-Կարագ 70-Մուրաբա 72-Յուղ /հալած/ 77-Ոլոռ /պահածո/ 79-Ոսպ 90-Պղպեղ՝ աղացած սև /քաղցր/ 103-Վարսակի փաթիլներ 105-Տավարի միս 106-Տոմատի մածուկ 108-Վարսակի թխվածքաբլիթ 2 | 1-16443<br>3-252000<br>8-139104<br>12-206640<br>13-362880<br>22-201600<br>29-141300<br>37-2835000<br>70-331200<br>72-312000<br>77-378000<br>79-100500<br>90-20250<br>103-105840<br>105-2520000<br>106-58968<br>108-48000 | «ՄԱՐՏԻՆ ԵՎ ԿՈ» ՍՊԸ | 06946672 | ք. Վանաձոր, Աբեղյան 46/1-1 | 23.01.2026թ. | «Վանաձոր համայնքի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ | Հրաժարվել է պայմանագիր կնքելուց | Սահմանված ամկետում չի ներկայացրել պայմանագրի իր կողմից հաստատված տարբերակը։ |

ՏՆՕՐԵՆ՝ Ժ.ՊԵՏՈՒՆՑ